Արձանագրություն 3

«Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ կարիքների համար «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/08» ծածկագրով Դեղորայքի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Վեդի

26.12.2025թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ս. Խաչատրյան – «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի փոխտնօրեն

Անդամներ

Ա. Սիմոնյան- «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դեղատան վարիչ
Հ. Գաբրիելյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ

Քարտուղար-գնումների համակարգող

Լ.Բազիկյան - «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգող

1. **ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում շտկման ենթակա փաստաթղթերի գնահատման վերաբերյալ**
(Ս. Խաչատրյան)

Հիմք ընդունելով «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով բացակայում է 15-րդ և 25-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և առաջնորդվելով 04 մայիսի 2017թ. N526-Ն Կառավարության որոշման 41-րդ կետի պահանջներով՝ հանձնաժողովը աճուրդն ամփոփվելուց հետո որոշում էր կայացրել 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ին շտկել առկա անհամապատասխանությունը:

Վերջինիս կողմից էլեկտրոնային աճուրդի համակարգ է ներմուծվել շտկման ենթակա ապրանքի ամբողջական նկարագիրը, «ԱԷՄՋԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ ապրանքի ամբողջական նկարագիրը, համապատասխանում է հրավերի պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց՝ մասնակցի հայտը գնահատել բավարար և ներկայացնել հետագա գնահատման:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

2. **Մասնակիցների առաջարկած գների մասին**
(Ս. Խաչատրյան)

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացվում են կից հավելվածով.

Համաձայն կից ներկայացված գնային առաջարկների հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18 մայիսի 2017թվականի թիվ 534-Ն որոշման 19-րդ կետի 1-ին ենթակետը՝ Համակարգի կողմից մերժվել են Մասնակիցների հայտերը 27-րդ և 32-րդ չափաբաժինների մասով, քանի որ ներկայացված գնային առաջարկներն աճուրդն ամփոփելու պահի դրությամբ գերազանցում են ընթացակարգի շրջանակներում գնվելիք ապրանքների ձեռքբերման համար գնման հայտով սահմանված գնման գները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3. Հայտերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին

(Ս. Խաչատրյան)

«ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/08» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման ապրանքների բնութագրի՝ օրենքով սահմանված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ –0

4. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/08» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակիցների, չկայացած չափաբաժինների մասին

(Ս. Խաչատրյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

4.1 «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/08» ծածկագրով կազմակերպված ԷԱՃ ընթացակարգում ընտրված մասնակիցներ ճանաչել

- **«Արֆարմացիա» ՓԲԸ**-ին - **1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 11, 12-րդ և 21-րդ** չափաբաժինների մասով:
- **«Նատալի Ֆարմ» ՍՊԸ**-ին - **19, 30-րդ և 37-րդ** չափաբաժինների մասով:
- **«Տոնուս-Լես» ՍՊԸ**-ին - **34-րդ** չափաբաժնի մասով:
- **«Իվաֆարմ» ՍՊԸ**-ին - **16-րդ և 18-րդ** չափաբաժինների մասով:
- **«ԱԷՄՋԻ» ՍՊԸ**-ին - **15-րդ և 25-րդ** չափաբաժինների մասով:
- **«Ֆարմասերվիս» ՍՊԸ** -ին - **1-ին և 47-րդ** չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

4.2 ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-26/05 ծածկագրով գնման ընթացակարգի չկայացման վերաբերյալ

Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետի՝ ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած 27-րդ և 32-րդ չափաբաժինների մասով, ինչպես նաև հայտարարել չկայացած 17, 20, 22, 23, 24, 26, 28, 29, 31, 33, 35-րդ և 36-րդ չափաբաժինների մասով՝ վերոնշյալ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

5. «ՎԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/08» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման հրապարակման և անգործության ժամկետի մասին

(Ս. Խաչատրյան)

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Ս.Խաչատրյան**

Հանձնաժողովի անդամներ՝ _____ **Ա.Սիմոնյան**

_____ **Հ.Գաբրիելյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ **Լ.Բազիկյան**